Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

B92
2783

59

ՀՐԱՀԱՆԳ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԼՐԱՑՆԵԼ ՑՈՒՑԱԿ ՁԵՎ № 1

1. Ցուցակագրման յենթակա են՝ (անկախ այն հարցից թե մատակարարվելու յեն կամ վոչ).

ա) Այն բոլոր ապրողները վորոնք ճգնաժամային օրը յեղել են այդ քաղաքի մշտական բնակիչները.

բ) Բոլոր նրանք, ովքեր թե մի ամսից պակաս են ապրում այդ քաղաքում, բայց հաստատվել են մշտականորեն (ունեն պաշտոն, արհեստանոց և այլն)։

գ) Բոլոր նրանք, ովքեր համարվում են քաղաքի մշտական բնակիչներ, բայց ճգնաժամային օրը բացակայել են քաղաքից և իրենց բացակայության օրվանից մինչև ճգնաժամային օրը չի անցել մի ամիս։

Ծանոթ.—Մի ամսից ավելի բացակա յեղողներից նրանք, ովքեր ճգնաժամային օրը բացակայել են, բայց վերադարձել են քաղաք նախ քան տվյալ թաղը կամ տունը ցուցակագրելը՝ յենթակա յեն ցուցակագրման։

դ) Բոլոր նորածինները, թեկուզ ճգնաժամային օրվանից հետո ծնած լինեն, յեթե տվյալ տունը դեռևս չի ցուցակագրվել

ե. Տվյալ տան մշտական բնակիչներից բոլոր նրանք, ովքեր մի ամսից պակաս տևողությամբ գտնվում են հիվանդանոցներում, ուղղիչ տներում, արգելարաններում, մանկատներում։

2. Մշտական բնակիչ լինելը վորոշվում է վոչ թե ցուցակագրվողների ինքնորոշումով, այլ փաստական ավյալներով, որինակ՝ պաշտոնով, արհեստով, զբաղմունքով կապված է, կամ սովորում է տվյալ քաղաքում և այլն։ Ցերեկարան ապրելը նույնպես համարվում է ապացույց մշտական բնակիչ լինելու։ Տվյալ քաղաքի հետ իր զբաղմունքով կապված վորևէ անձի խնամքի տակ գտնվողները նույնպես համարվում են տվյալ քաղաքի մշտական բնակիչներ։

3. Ցուցակագրման յենթակա չեն՝

ա) Մշտական բնակիչներից բոլոր նրանք, ովքեր մի ամսից ավելի բացակայում են քաղաքից։

բ. Բոլոր ժամանակավոր ապրողները, վորոնց զբաղմունքը տվյալ քաղաքի հետ կապված չէ և իրենց բնակության օրվանից մի ամիս չի անցել։

գ. Ճգնաժամային օրվանից մինչև ցուցակագրության օրը մահացածները։

դ. Վորոնք մի ամսից ավելի տևողությամբ գտնվում են հիվանդանոցում, ուղղիչ տներում և այլն։

4. Ցուցակագրությունը կատարվում է հանձնաժողովի անդամների մասնակցությամբ և հարցման կարգով, կամ ներկայացված փաստաթղթերի հիման վրա։ Այն անձինք, վորոնք ցանկանում են գնման փաստաթղթերով [illegible] իրենց իրավունքը ապացուցել, պարտավոր են [illegible] փաստաթղթերից վորևէ մեկը ներկայացնել։

2783-ԱԳՂ

ա) Հաշվեգրքույկ, յեթե նրա մեջ փետրվար ամսվա վերաբերյալ տեղեկանքներ և պաշտոնը, զբաղմունքը կան մուծված:

բ) Դպրոցական հիմնարկից տրված տեղեկանք.

գ) Աշխատանքի տեղից տրված տեղեկանք.

դ) Սոցապի գրքույկ:

ե) Ապրուստի միջոցներն ապացուցող այլ փաստաթղթեր:

5. Բանվորական կատեգորիայով գնման փաստաթուղթը ստանալու իրավունք ունեցողները պետք է ներկայացնեն ձեռնարկությունից փաստաթուղթ, վորի մեջ մանրամասնորեն և ճշգրիտ կերպով պետք է ցույց տրված լինի իրենց աշխատանքի տեսակը:

6. Ինքնուրույն ապրուստի աղբյուր չունեցողների և յերեխաների վերաբերյալ տվյալները պետք է լրացնել անձնական ցուցմունքներով (առանց փաստաթուղթ պահանջելու):

7. Նույնպես անձնական ցուցմունքների հիման վրա լրացվում է ցուցակը այն անձերի վերաբերմամբ, վորոնք մատակարարվելու յենթակա չեն և կամ այդ առթիվ իրենց իրավունքը չեն ապացուցել: Այդ մասին համապատասխան նշումներ պետք է կատարել № 16 և 17 սյունակներում:

8. Ամեն մի տան բոլոր բնակիչների համար պետք է լրացնել մի ցուցակ, յեթե տան բնակիչները թվով շատ լինեն ու ցուցակը չբավի, այդ դեպքում կցվում է մի ուրիշը և վրան՝ աջ կողմում «թերթիկ №» հարցին պատասխանվում է գրելով «ա», «բ», «գ», «դ» և այլն, ըստ վորում առաջին թերթիկում բացի «ա» տառից պետք է գրել նաև «շարունակելի»:

9. Ցուցակը լրացնելիս վերնագրում անպայման պետք է գրել քաղաքի անունը, իսկ յեթե վիճակագրվում է ծայրամասային արվարձաններից մեկն ու մեկը՝ այդ դեպքում պետք գրել նաև այդ արվարձանի անունը, օրինակ՝

Յերևան—Նորք — Ղարաքիլիսա—Փաշի գեղի տները

Գորիս—Գորիս գյուղ — Ջիլիջան—Ձճուղու վրայի Պողոս Քելիսեցոց տները:

10. Հարցաթերթիկի վերնագրում պետք է գրել նույնպես միլիցիական թաղամասի անունը (մեծ քաղաքների համար), շինարարական թաղի և փողոցի անունները ու տնահամարը: Վերնագրի ներքևում պետք է գրել այդ քաղաքի համար նշանակված ճգնաժամային օրվա թվականը:

11. Թերթիկի վերևում աջ կողմում պետք է գրել.

ա) Տնացուցակի մեջ այդ տան գրված նշանակված հերթահամարը:

բ) Ցուցադրական և հրահանգչական (թաղային գրանցման) [illegible] № . . . : Ցուցակագրական շրջանը պետք է համարել [illegible] մի ցուցակագրողին տրված բոլոր թաղերը, [illegible] շինարարական թաղամաս:

12. Սյունյակ № 1-ում պետք է գրել ընտանիքների հերթահամարը: Մինչև վոր մի ընտանիքի բոլոր անդամները չգրըվեն, չպետք է անցնել մյուս ընտանիքի ցուցակագրմանը:

13. Ընտանիք համարվում է մի բյուջեյով ապրող անձանց խումբը: Ազատը համարվում է առանձին ընտանիք: Ընտանիքի գլխավորի խնամքի տակ գտնվող և նույն տան մեջ միասին ապրող բոլոր ապրող բոլոր ազգականները համարվում են նույն ընտանիքի անդամները:

14. Մի ընտանիք ամբողջովին ցուցակագրելուց հետո, թերթիկի ամբողջ ուղղությամբ հորիզոնական գիծ է քաշվում ընտանիքների շնչերն իրարից տարբերելու համար:

15. Ցուցակագրելու ժամանակ չշփոթելու և բացթողումներ չունենալու համար, յեթե տան բնակարանները հերթահամար ունեն՝ պետք է սկսել առաջին բնակարանից, վորի մեջ ապրող բոլոր ընտանիքներին ցուցակագրելուց հետո միայն պետք է անցնել մյուս բնակարաններին:

16. Ցուցակագրելու ժամանակ պետք է ձեռքի տակ ունենալ տնային գրքույկը և բոլոր տվյալները ստուգելով անցկացնել ցուցակում:

17. Սյունյակ № 2-ում և № 3-ում պետք է գրել տան բոլոր բնակիչներին և ամեն մեկին հատկացնել մի տող:

18. Սյունյակ № 2-ում պետք է դնել հերթահամար վոչ թե ամեն մի ընտանիքի համար առանձին-առանձին, այլ տան մեջ բոլոր ապրողների համար պետք է հերթահամարը շարունակվի և յեթե բնակչության շատության հետևանքով նոր թերթիկներ են կցվ[illegible] ապա նրանց վրա այդ հերթահամարը շարունակվում է և վոչ նորից սկսում:

19. Սյունյակ № 3-ում պետք է գրել ընտանիքի անդամների անունները, ամեն մեկին հատկացնելով մի տող: Նախ պետք է գրվի ընտանիքի գլխավորը և ապա մյուս անդամները, վորովհետև դա ցուցակագրողի աշխատանքը հեշտացնում է: Ընտանիքի գլխավորի համար պետք է գրել ազգանուն, անուն և հայրանուն լրիվ, իսկ մյուսների համար միևույն ազգանուն և հայրանուն ունեցողների համար պետք է դնել չակերտ:

20. Ազգանվան, անվան կամ հայրանունի կրճատում չի թույլատրվում, պետք է գրել լրիվ: Նույն տողում չը տեղավորվելու դեպքում գրել մանր և յերկու տողով առանց գիծն անցկացնելու:

21. Զպետք է մոռանալ, վոր պետք է գրել բոլոր փոքր յերեխաներին թեկուզ լինի մի օրեկան նորածին:

22. Սյունյակ 4-ում պետք է գրել «ար» (արական) և «իգ» (իգական) կրճատ ձևով և վորոշակի:

23. Սյունյակ 5-ում տարիքը գրել լրացված տարիներով, յեթե մեկը 8 տարեկան է և 11 ամսական, պետք է հաշվել 8 և վոչ թե 9 տարեկան:

24. Տարիքի հարցի պատասխանները պետք է գրել թվանշաններով և առանց ամիսները ցույց տալու։ Նորածինների համար, վորոնց դեռևս մի տարին չի լրացել պետք է գրել «0»։ Չի թույլատրվում գրել ծննդյան տարեթիվը, այլ պետք է գրել տարիքը։

25. Այն յերեխաները, վորոնք 11, 12, 13 և 14 տարեկան են ցույց տրվում, պետք է ճշտել փաստաթղթերով (Զագսի, դպրոցական վկայականներ)։

26. Գրագետ է նա, ով կարդալ և գրել գիտե։ Կիսագրագետ է համարվում նա, ով հեգելով է կարդում և մեծ սխալներով, իսկ անգրագետ է նա, ով վոչ կարդալ և վոչ էլ գրել գիտե։ Գրաճանաչը, վոր կարողանում է գրեր կապել՝ համարվում է կիսագրագետ։ Բայց միայն ստորագրել գիտցող, բայց գրերը չճանաչողին պետք է համարել անգրագետ։

27. Սյունյակ 5-ում պետք է գրել պատասխանները կըրճատված.

«անգ» նշանակում է անգրագետ
«կիս» » » կիսագրագետ
«գր» » » գրագետ

«—» պետք է դնել մինչև 6 տարեկան յերեխաների դիմաց, վորոնց գրագիտության մասին չպետք է հարցնել։

28. Սյունյակ 6-ում պետք է գրել մանրամասնորեն այն զբաղմունքը (թե ինչ աշխատանք է կատարում, կամ ինչ պաշտոն է վարում, այսինքն պրոֆեսիայի ճիշտ բնորոշումը), վորից տվյալ անձն աշխատավարձ կամ յեկամուտ է ստանում։

Յեթե տվյալ անձնավորությունը չունի սեփական աշխատավարձ կամ յեկամուտ՝ այդ դեպքում պետք է ցույց տալ ապրուստի միջոցները, որինակ տնավարձ, կենսաթոշակ և այլն։

Զբաղմունքը կամ ապրուստի միջոցը պետք է գրել այնպիսի ճշտությամբ, վոր հնարավոր լինի պարզել թե ինչ աշխատանք է կատարում։ Այսպես, չպետք է գրել «մետաղագործ», «կապի աշխատակից» կամ «չինարար բանվոր» այլ պետք է ճշտիվ բնորոշել որինակ՝ «փականագործ», «նամակատար», «հյուսն» և այլն։

29. Յեթե վորևվե մեկը ցուցակագրության ժամանակ ժամանակավորապես կրճատված է աշխատանքից և աշխատանք չունի, պետք է գրել «գործազուրկ»։

30. Յեթե ցուցակագրվողը չունի զբաղմունք, այլ ունի ապրուստի միջոցներ, այդ դպքում վերջինս պետք է ցույց տալ ճշտությամբ, որինակ՝ «տնավարձ», այդուց յեկամուտ (յեթե ինքը չի աշխատում), «կենսաթոշակ», «ստիպենդիա» և այլն։

31. Յեթե ցուցակագրվողը չունի սեփական աշխատավարձ կամ յեկամուտ, և ապրում է ուրիշի հաշվին, այդ դեպքում № 6

սյունյակում պետք է գրել խնամողի այդ ցուցակում ունեցած հերթահամարը, որինակ՝ «ապրում է № . . . ի հաշվին, կամ թե ի հաշիվ № . . . . .-ի։ Յեթե խնամողը չի ապրում այդ տան, այդ դեպքում № 6, 7 և 8 սյունյակներում պետք է գրել նրա ազգակցական կապը, սոցիալական դրությունը և աշխատանքի տեղը, որինակ «մետաղագործարանի դարբին բանվոր հոր հաշվին», «Պետրանկի հաշվապահ ամուսնու հաշվին»։

32. 14—ից բարձր տարիքի սովորողների համար սյունյակ 6-ում պետք է գրել «սովորող»։ Յեթե սովորողը ստանում է ստիպենդիա, այդ դեպքում նշել «սովորող ստիպենդյանտ», իսկ յեթե չի ստանում ստիպենդիա, այդ դեպքում մանրամասնորեն (տես. հոդ. 31) պետք է նշել ում խնամքի ներքո է գտնվում, որինակ՝ «սովորող № . . . .-ի հաշվին» կամ «սովորող մետաղագործարանի դարբին, բանվոր հոր հաշվին»։

33. Տնային տնտեսուհիներին պետք է հաշվել անինքնագործ և անպայմանորեն նշել (հոդված 31-ի կարգով) թե ում խնամքի ներքո է ապրում, որինակ՝ «№ . . . .-ի հաշվին», կամ թե յեթե խնամողը բացակա յե «մետաղագործարանի դարբին, բանվոր հոր հաշվին»։

34. Սյունյակ 7-ում վարձու աշխատողների դիմաց պետք է նշանակել «բանվոր» կամ «ծառայող»։ Գործազուրկների համար նշում կատարվում է ըստ իրենց վերջի, նախքան գործազրկության աշխատանքի։

35. Վոչ վարձու աշխատանք կատարողների համար անպայման պետք է զատորոշել թե նա կոոպերացվա՞ծ է (արտելի, կոլխոզի անդամ) թե վոչ (աշխատո՞ւմ է ինքնուրույն կերպով)։

Ծանոթություն.— Տնայնագործական վարկային ընկերությունների անդամակցությունը չի համարվում կոոպերացում։

36. Յեթե արհեստի, զբաղմունքի մեջ մասնակցում են ընտանիքի մի քանի անդամներ, վորոնց մասնակցությունն արտահայտվում է միմիայն գլխավոր աշխատողին ոժանդակելով, այդ դեպքում № 6-8 սյունյակներում պետք է գրել «ոգնում է № . . -ին»։ իսկ յեթե գլխավոր ոգնողը բացակա յե, այդ դեպքում № 6 և 8 սյունյակները լրացվում են սովորական կարգով, իսկ № 7-ում գրվում է՝ «ոգնում է»։

37. Սյունյակում 8-ում պետք է ցույց տալ աշխատանքի տեղը, վորտեղ ցուցակագրվողը ծառայում կամ աշխատում է։ Աշխատանքի տեղը պետք է գրել այնպես, վոր պարզ լինի թե ինչ արտադրու-

թյան ճյուղի յե վերաբերվում տվյալ ձեռնարկությունը: Որինակ՝ չպետք ե գրել «Արարատ գործարան», «Նեցուկ» և այլն, այլ պետք ե գրել «Արարատ գինու կոնյակի գործարան», «Նեցուկ» կարի արհեստանոց և այլն:

38. 14 տարիքից բարձր սովորողների համար պետք ե նշել այն դպրոցական հիմնարկի անունը ուր սովորում են, որինակ՝ «Քիմիական տեխնիկում»:

39. Իրենց սեփական գործ ունեցող տնայնագործների, առևտրականների համար պետք ե նշել այսպես՝ «իր դարբնոցում», «իր առևտրի խանութում», «իր կարի արհեստանոցում»: Տան աշխատողներն ու առանձին արհեստանոց ունեցողները նշվում են միատեսակ, չպետք ե գրել «իր տանը» այլ պետք ե գրել՝ «իր կարի արհեստանոցում» և այլն:

40. Կոոպերացվածները պետք ե գրեն վոչ թե միայն արտելի անունը, այլ նաև աշխատանքի տեսակը, այսպես՝ «Զեվող կոշկակարների արտել», «Կոլխոզ միություն», «Բանկոոպի սափրիչների 1 արտել» և այլն:

41. Սյունյակ 9-ում պետք ե ցույց տալ թե 8-րդ սյունյակում ցույց տրված հիմնարկը կամ ձեռնարկը վո՞ր սոցիալական սեկտորին ե պատկանում՝ կուսակցական, արհմիութենական կազմակերպությունների, ինչպես նաև կամավոր սկզբունքով գործող ընկերությունների, (Կարմիր Խաչ, Պաշը-Ավիոքիմ, Մոպր, Ավտոդոր, Հոկ և այլն) հիմնարկները պետք ե հաշվել հասարակական: Կոնցեսիաները ինչպես նաև պետությունից արդենով վերցրված ձեռնարկությունները պետք ե հաշվել մասնավոր սեկտորի վրա: Մասնավոր սեկտորի վրա պետք ե հաշվել նաև այն բոլոր ձեռնարկությունները (արհեստանոց, խանութ և այլն), վորոնք կոոպերացված չեն (արտելի անդամ չեն): Մասնավոր սեկտորի վրա պետք ե հաշվել նաև տնային սպասուհին և ինքնուրույն աշխատող հողագործներին:

42. Սյունյակ 10-ում պետք ե ցույց տալ թե, վոր արհմիության ե պատկանում ցուցակագրվողը: Եթե արհմիության անդամ չե՝ պետք ե դիծ քաշել:

43. Սյունյակ 11-ում պետք ե նշանակել սպառկոոպի (բանկոոպի) այն անդամներին, վորոնք ցույց են տալիս իրենց Բանկոոպի դրքույկը, այլապես դիծ պետք ե քաշել:

44. Այն բոլոր անձինք, վորոնք մատակարարվելու իրենց իրավունքը ապացուցել են սյունյակներ № 12-ում պետք ե 2 նշում կատարել՝

ա) Մատակարարման կատեգորիայի մասին հետեվյալ նշումներից վորևե մեկով՝ «Ա», «Բ», «II», «III»:

բ) Մատակարարման նորմայի մասին (վոր ցուցակով մատակարարվելը) «1» (առաջին ցուցակ), «2» (երկրորդ ցուցակ), «3» (երրորդ ցուցակ):

Ծանոթություն.— Թե ի՞նչպես վորոշել և նշել մատակարարման կատեգորիաներն ու նորման, տեսնել հատուկ հրահանգը «Մատակարարման կատեգորիաներն ու նորմաները»:

45. Ցերկաթուղային պետք ե հաշվել բոլոր նրանց, ովքեր աշխատում են յերկաթուղում և նրանց ընտանիքի անդամները:

Ծանոթություն.— Ցերկաթուղային չեն հաշվվում յերկաթուղային դպրոցներն, առողջապահական, սոցիալական ապահովագրության վերաբերող անձնակազմը:

ա) Ցերկաթուղային ընտանիքի ինքնագործ անդամներն ու նրանց խնամակալները նշվում են ըստ իրենց զբաղմունքի և աշխատանքի տեղի և չեն հաշվվում յերկաթուղային:

46. Սյունյակներ № 13, 14, 15, և 19 չպետք ե լրացնել ցուցակագրության ժամանակ, դրանք լրացվում են թաղային գրասենյակում, բացի հոդված 52-ի պարագայից:

47. Այն անձինք վորոնք չեն ունեցել փաստաթուղթ և վորով դժվար ե ապացուցել թե մատակարարման վոր կատեգորիային են պատկանում, այդպիսիներին պետք ե գրել սյունյակ 16-ում:

48. Այն անձինք, վորոնք մատակարարվող բնակչության կատեգորիային չեն պատկանում, պետք ե գրել սյունյակ 17-ում:

49. Սյունյակ 18-ում պետք ե գրել թե ինչու տվյալ անձը ցուցակագրված ե սյունյակներ № 16 և 17-ում (ձայնազուրկ, բացակա եր, տեղեկություն չկա և այլն):

50. Սյունյակ 18-ում, այն անձինք, վորոնք զբաղված են արդյունաբերության տնայնագործության կամ փոխադրության ասպարեզներում անպայման այդ մասին պետք ե գրել, որինակ՝ «դերձակ՝ վարձու բանվորներով», «տան վարձով ապրող տնատեր», «կապալառու», «ունի ճաշարան»:

Ցերկրագործների համար՝ յեթե անհատական կամ ընդհանուր կարգով ե հարկված, նշել «անհատական կարգով հարկված», «ընդհանուր կարգով հարկված» և կամ «հարկադրումից ազատված»:

51. Ցեթե դնման դրքույկ չի տրվում ցուցակագրվողի վոչ թե ներկա, այլ նախորդ զբաղմունքի հետեվանքով, այդ դեպքում պետք ե նշել հետեվյալ ձևով՝ «նախկին գործարանատեր», «նախկին

1931 թ.

առեվտրական», «նախկին տնատեր»: Այդպիսիների վերաբերմամբ ցուցակներ № 6–8–ում պետք է նշել նրանց ներկա զբաղմունքը, սոցիալական դրությունը և աշխատանքի տեղը:

52. Եթե վորևե անձ մատակարարվելու է վոչ թե տվյալ վայրի սպառկոոպում, այդ դեպքում անպայմանորեն պետք է №12 և հետագա սյունյակներում գրել «մատակարարվում է ըստ աշխատանքի տեղի . . . . . բանկոոպում (շրջկոոպում):

53. Ցուցակագրությունը պետք է կատարել մաքուր և ըստ հնարավորության թանաքով:

54 Ցուցակագրությունը վերջացնելուց հետո (որը–որին ամեն մի տան վերաբերող ցուցակի համար 12 սյունյակներում յեղած նշումները գումարվում և գրվում են յետեվի յերեսի ներքևի ամփոփման սյունյակներում: Այդ առթիվ պետք է զատել յերկաթուղայինները և ճշտել հատուկ այդ առթիվ ցույց տրված սյունյակներում:

Նույն ներքևի սյունյակներում ամփոփվում են նաև գրագիտության (սյունյակ № 5ա) և մատակարարման վերաբերող № 16 և 17–րդ սյունյակների տվյալները համապատասխան սյունյակներում: Դրանից հետո լրացվում են ներքևի սյունյակների 17, 34, 35 և 38 գումարային սյունյակները:

Ծանոթություն.—Բացի յերկաթուղային անդրագետներից, մնացյալ բոլոր անդրագետները (նաև անորոշներն ու ձայնազուրկները) պետք է գումարել և միասին գրել ամփոփման 1–4 սյունյակներում:

55. Ամեն մի ցուցակի տակ ստորագրում են հանձնաժողովի անդամները:

56. Հոդվածներ 54–ի և 55–ի աշխատանքներն ավարտելուց հետո ցուցակագրողը կազմում է ձեվ № 3–ի վերստուգողական թերթիկ, ուր տող առ տող արտագրում է ձեվ № 1–ի ներքևի սյունյակների տվյալները:

Եթե մի տան համար (մեծ թվով բնակիչ ունենալը) մի քանի № 1 ցուցակներ են կազմված, այդ դեպքում № 3–ում պետք է արտագրել միմիայն վերջի թերթիկի վրա յերկրորդ տողով տրված ընդհանուր գումարը:

57. Այդ աշխատանքն ավարտելուց հետո ցուցակագրողը ձեվ № 1–ը հանձնում է հրահանգչին (թաղային դրասենյակ), իսկ ցուցակագրական շրջանն ավարտելուց հետո՝ հանձնում է նաև ձեվ № 3 վերստուգողական թերթիկը:

ՀՀ Ազգային գրադարան
NL0945922

U92
2783